9125

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«09» 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0118-21

Ձեռնարկողը՝ ***«Ազուրիտ» ՍՊԸ***
Ք. Երևան, Բաղրամյան 2, բն.55

Գործունեությունը՝ ***Արամուսի բազալտների հանքավայրի «Շամիրամ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0118-21

«09» 07 2021թ.

Արամուսի բազալտների հանքավայրի «Շամիրամ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Ազուրիտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի Արամուս համայնք

Արամուսի բազալտի հանքավայրի «Շամիրամ» տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյանի ենթաշրջանում՝ Արամուս և Կամարիս գյուղերի միջակայքում: Տեղամասը հողածածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Արամուս, Զովք, Ձորաղբյուր և Կամարիս գյուղերի, Աբովյան և Երևան քաղաքների հետ: Հանքավայրի մոտակա բնակավայրերն են՝ Արամուս համայնքը, որը գտնվում է հանքից 1.9կմ հյուսիս, Կամարիս համայնքը՝ հանքավայրից 2.7կմ հյուսիս-արևելք: Հայկական երկաթուղու Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից 6.0 կմ հեռավորության վրա:

Օգտակար հանածոների արդյունահանման համար նախատեսված տարածքի հողերը գյուղատնտեսական նշանակության են, ըստ հողատեսքի՝ արոտավայր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Տարածքի կլիման բնութագրվում է ցուրտ ձմեռով և մեղմ, զով ամառով: Տեղումների տարեկան քանակը կազմում է 310մմ մինչև 726մմ: Օդի հարաբերական խոնավությունը 71% է, քամու տարեկան միջին արագությունը՝ 2,1 մ/վրկ: Հանքի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ բացակայում են գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Համաձայն հաշվետվության հանքավայրի տարածքով կամ դրա մոտակայքով մշտապես հոսող գետերը կամ գետակները բացակայում են: Ռելիեֆի ցածրադիր վայրերում, կապված գարնանային ձնհալի կամ աշնանային տեղումների հետ, կարող են

առաջանալ ժամանակավոր սեզոնային ջրային հոսքեր: Հանքավայրին ամենամոտ մշտապես հոսող գետային ցանց է հանդիսանում Հրազդան գետը՝ Մարմարիկ վտակով, որը գտնվում է հայցվող տարածքից շուրջ 10կմ հեռավորության վրա: Բացահանքի տարածքում, մոտակա 9-10կմ հեռավորությամբ բացակայում են նաև ջրամբարները, լճերը կամ լճակները: Հանքավայրի շրջանում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն լանդշաֆտները, բարձրադիր մասերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը:

Համաձայն հաշվետվության Եղվարդի սարահարթի տարածքին բնորոշ են կիսանապատային, օշինդրա-կիսանապատային և տափաստանային բուսականությունը: Հացազգի-տարախոտային բուսատեսակներից առկա են շյուղախոտ լեռնայինը, բարակոտնուկ սանրավորը, ծորնուկ խայտաբղետը և այլ տարազգի բուսատեսակներ: Հանքավայրի տարածքում կենդանատեսակներից հանդիպում են սակավաթիվ տեսակներ, որոնցից են դաշտամուկը, փոփոխական դոդոշը, և այն կենդանատեսակներն ու թռչնատեսակները, որոնք հարմարվող են մարդկային միջամտության նկատմամբ: Համաձայն հետազոտության բուն հանքավայրի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, հազվագյուտ, վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան, ամենամոտ պատմամշակութային հուշարձանը գյուղից գտնվում է 0.5կմ հեռավորության վրա:

Արամուսի բազալտների հանքավայրի Շամիրամ տեղամասի հաշվեկշռային պաշարները հաստատվել են ՀՀ ԲՆ ՕՀՊԳ-ի կողմից 2008թ-ի ապրիլի 25-ին թիվ 168 որոշումով և B կարգով՝ կազմել են 634.3հազ.մ^3: Երեսապատման բլոկների ելքը՝ 35%:

Սույն նախագծով նախատեսվում է.

- Հանքային դաշտի տարածքի մշակում բաց լեռնային աշխատանքների եղանակով, բլոկների արտադրության նպատակով:
- Արդյունահանված բազալտների տեղափոխում Աբովյան քաղաքում գտնվող քարամշակման արտադրամաս:
- Մակաբացման ապարների պահեստավորում բացահանքի տարածքից դուրս, արտաքին լցակույտերում, այդ թվում հողի վերին շերտի պահեստավորում՝ առանձին:
- Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի իրականացում:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվող բացահանքն ունենալու է հետևյալ պարամետրերը՝

1. Առավելագույն երկարությունը – 474.0մ,
2. Առավելագույն լայնությունը – 293.0մ;
3. Բացահանքային դաշտի օտարման մակերեսը – 9.0հա;
4. Բազալտների հաշվեկշռային պաշարի ծավալը (մարվող պաշար)– 610500.0մ^3;
5. Բազալտների արդյունահանվող ծավալը – 550690.0մ^3;
6. Հանքաստիճանի բարձրությունը - 5.0մ;
7. Մարված հանքաստիճանի թեքման անկյունը – 75^0;
8. Մակաբացման ապարների ծավալը – 399800.0մ^3;
9. Մակաբացման միջին գործակիցը կազմում է՝

$$K_{մ} = 399810 : 550690 = 0.726 մ^3/մ^3$$

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի մարվող զանգվածի կազմում է՝ 30525.0մ^3: Հաշվի առելով նախագծային կորուստները,

բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի արդյունահանվող զանգվածի կկազմի՝ 27535.0մ³:

Հանքավայրի արդյունահանման ժամանակ՝ պայմանավորված հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով, առաջանալու են օգտակար հանածոյի 59810.0մ³ (9.8%) ընդհանուր ծավալով կորուստներ:

Նախատեսվող հանքավայրի հաստատված պաշարների անկյունային կոորդինատները համաձայն ARM WGS-84 համակարգի հետևյալն է.

1. Y =8471308.0 X =4454512.3
2. Y =8471280.1 X =4454628.7
3. Y =8471305.9 X =4454644.2
4. Y =8471297.8 X =4454775.7
5. Y =8471176.9 X =4454852.1
6. Y =8471172.6 X =4454959.1
7. Y =8471078.6 X =4454943.8
8. Y =8470997.7 X =4454858.2
9. Y =8471005.9 X =4454693.2
10. Y =8471097.6 X =4454581.9

Բացահանքի շահագործումը սկսելու համար նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1. Թեք կիսախրամի անցում՝ l=260.0մ, b=6.0մ,
2. 1591մ աշխատանքային հորիզոն.
- մակաբացման ապարների հեռացում - 450.0մ³,
3. 1586մ աշխատանքային հորիզոն.
- մակաբացման ապարների հեռացում - 260.0մ³,
4. Մոտեցող ավտոճանապարհի կարգաբերում – 80.0մ³,
5. Լցակույտային հրապարակի նախապատրաստում – 120.0մ³,
6. Արտադրական հրապարակի նախապատրաստում – 50.0մ³

Նախագծվող բացահանքի արևմտյան հատվածով անցնող ավտոճանապարհից, դեպի բացահանքի 1997մ բարձրության նիշը նախատեսվում է ներքին թեք կիսախրամի անցում, որից, ըստ հորիզոնների, կատարվելու է աշխատանքային հորիզոնների բացումը՝ բացող հորիզոնական կիսախրամների անցումով:

Խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 14.0մ:

Աշխատանքային հորիզոնի բացման ընթացքում օգտագործվելու է բուլդոզեր–էքսկավատոր – ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրը:

Հանքավայրի լեռնատեխնիկական և լեռնաերկրաբանական պայմանները կանխորոշում են բացահանքի շահագործումը միակողանի, ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակաբացման ապարներն արտաքին լցակույտեր տեղափոխումով:

Միաքարի անջատման և մասնատման աշխատանքների հիմնական մասը իրականացվելու է հորատասեպային եղանակով՝ հորատապայթեցման աշխատանքները կատարվելու են ըստ անհրաժեշտության, որպես լրացուցիչ միջոց: Պայթեցման աշխատանքների ժամանակ հեռավորությունը որոշված է համաձայն ՀՀ կառավարության 06.03.2008թ-ի թիվ 291-Ն որոշման՝ ըստ պայթեցման աշխատանքների ժամանակ անվտանգության միասնական կանոնների (ԱՄԿ):

Գնահատման հաշվետվությունում բացահանքի լցակույտային ապարները ներկայացված են մակաբացման ապարներով՝ 399800.0մ³, այդ թվում հողաբուսական շերտը՝ 9300.0մ³ և արտադրական թափոններով՝ 89489.0մ³: Բացահանքի շահագործման 1-5 տարիներին, լցակույտային ապարները (մակաբացման ապարներ)՝ 99952.0մ³x1.1=109947.2մ³, այդ թվում հողաբուսական շերտը՝ 2418.0մ³ ծավալով, արտադրական թափոնները՝ 89489.0մ³x1.3=116335.7մ³ (որտեղ 1.1, 1.3-ը համապատասխանաբար մակաբացման ապարների և արտադրական թափոնների

փխրեցման գործակիցներն են) ծավալներով, ընդամենը՝ 226282.9մ³ նախատեսվում է պահեստավորել արտաքին լցակույտերում, տեղադրված բացահանքի հյուսիսային եզրագծից դուրս: Բացահանքի եզրագծում առկա հողաբուսական շերտը, շահագործման 5 տարիներին նույնպես տեղափոխվելու է դեպի արտաքին լցակույտ, և առանձին պահպանվելու է ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

Լցակույտերի հիմքի զբաղեցրած մակերեսը կազմում է 2.2հա, բարձրությունը՝ 10մ, շեպի թեքման անկյունը՝ 30-35⁰:

Համաձայն հաշվետվության՝ շահագործման 6-րդ տարուց նախատեսվում է Աբովյան քաղաքում գտնվող բլոկների վերամշակման արտադրամասին կից կառուցել ՋՏ կայան՝ շինարարական խիճ ստանալու համար, որից հետո արտադրական թափոնները կտեղափոխվեն Աբովյան քաղաք: ՋՏԿ կտեղափոխվի նաև լցակույտում պահեստավորված 116335.7մ³ ծավալով արտադրական թափոնը:

Համաձայն հաշվետվության շահագործման 6-րդ տարուց, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ, երբ բացահանքում կառաջանան մշակված ազատ տարածքներ, լցակույտային ապարները կպահեստավորվեն բացահանքի մշակված տարածքներում: Դեպի բացահանքի մշակված տարածքներ կտեղափոխվեն նաև արտաքին լցակույտում կուտակված մակաբացման ապարները, ներառյալ հողաբուսական շերտը՝ 109947.2մ³ ընդհանուր ծավալով:

Բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողատարածքների լեռնատեխնիկական վերականգնում՝ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Լեռնատեխնիկական վերականգնման ընդհանուր մակերեսը կազմելու է 11.43հա: Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսվում է 6600.9 հազար ՀՀ դրամ:

Համաձայն հաշվետվության բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են նաև բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված յուղեր (1.19տ/տարի/ և դիզելային յուղերի մնացորդներ (0.9տ/տարի), հավաքվելու են առանձին մետաղական տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են յուղերի և քսայուղերի վերամշակման կետերին,

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում առաջացած բանեցված անվադողերը (0.6տ/տարի), բանեցված կապարե կուտակիչները և խոտանը՝ (50կգ/տարի), հավաքվելու են նախատեսված տարածքներում, հետագայում վերամշակող ընկերություններին պայմանագրային հիմունքներով վաճառելու համար,

- պինդ կենցաղային թափոնները (կենցաղային աղբ), կուտակվելու է տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու (69.16 մ³/տարի) և տեխնիկական (525.0մ³) նպատակներով: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների, արտադրական հրապարակների, լցակույտերի, 3500մ² մակերոսով ընդհանուր տարածքների փոշենստեցման համար: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են օրեկան 0.23մ³ տարողությամբ բետոնային լցարան, որը դատարկվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից: Հանքավայրի բաց եղանակով շահագործման ժամանակ արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Համաձայն հաշվետվության հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու արդյունահանման, լեռնակապիտալ աշխատանքների, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային փոփոխության և ամբողջականության պահպանման, թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործումից, տրանսպորտի օգտագործումից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, բենզինային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, ածխաջրածիններ: Համաձայն գնահատման հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների, սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Հանքավայրի շահագործման հետևանքով մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական տարեկան առավելագույն վնասը կազմում է 221.100հազ. դրամ, իսկ հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած վնասը՝ 231840.0 հազ. դրամ:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,
- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,
- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,
- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան հաշվարկվել է հանքավայրի փակման համար ֆինանսական երաշխիքը՝ 300 հազար դրամ:

Բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի իրականացման համար նախատեսվելու է տարեկան 300 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Արդյունահանման աշխատանքները կատարվելու են հորատասեպային և հորատապայթեցման եղանակով, հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները, ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Արդյունահանման տարածքներում կենսաբազմազանության բացակայությունը պայմանավորված է տարածքի անտրոպոգեն ազդեցության, ճանապարհի հարևանությամբ գտնվելու և մարդկային գործոնի առկայության հետ:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Արամուս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, կադաստրի կոմիտեն: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), ինչպես նաև մակերևույթային և լեռնային ապարների տեղաշարժի մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:
4. Նախատեսվող գործունեության ընթացքում պայթեցման աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 2008թ-ի մարտի 6-ի N291-Ն որոշման պահանջներին համապատասխան, ինչպես նաև ապահովել շրջակա միջավայրի, մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները:

5. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Ընկերության կողմից նախատեսվող ջարդիչ տեսակավորող կայանի (ՋՏԿ) համապատասխան փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է Օրենքով սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
7. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազուրիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արամուսի բազալտների հանքավայրի «Շամիրամ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Ա. Վարդանյան